

ՈՐԸ ՊԻՏԻ ԼԻՆԻ ՀՅՑ ԱԶԳԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ^{*)}

Մի քանի օր սրանից առաջ թէ լրտգրութեան մէջ և թէ մասնաւոր տեղեկութիւններից յայտնի եղաւ, որ Կ. Պոլսի Հալոց պատրիարք՝ Մաղաքիա Արքեպիսկոպոս Օքաննեանը դիմել է մի թղթով ամենայն Հալոց Կաթուղիկոսին, որով խնդրում է ազդել Կովկասի հայ լեզափոխական կուսակցութիւնների վրայ, որպէս զի նրանք դադարեցնեն իրենց գործունէութիւնը Թիւրքիայում, որովհետեւ հայ ժողովրդի կեանքը այնտեղ սոսկալի է գարձել և կոտորածը բնացինչ կանի հալութիւնը, եթէ այնտեղ նորից վրդովմունք լինի: Ես միմիայն լսել էի այս մտոին, բայց հաստատ տեղեկութիւն չունեի:

Երբոր Ռուսաստանուս մամուլի ազատութիւն չկար, շատ բնական էր, որ լուռ էին մնում բազմաթիւ հայեր, որոնք իրենց խելքի և հոգուոյ առանձնալատկութիւնների ջնորհիւ չեն ցանկանում կամ չէին կարողանում բացարձակ և անկեղծօրէն մասնակցել այն բոլոր իրողութիւնների քննադատութեան և գնահատութեան գործին, ոռոնք կատարում էին հայի հայրենիքում: Բայց յայտնի է, որ բռնութեան կամ բռնապետութեան ամենագլխա-

^{*)} Այս յօդուածը վաղուց արդէն յանձնուած էր խմբագրութեան և շարուած, երբ մեծ. բժ. Աղասարեանը տուեց մեզ կարդալու Բօստոնում տպուած Մ. Սմբատ Գաբրիէլեանի «Հայկական ճգնաժամը» և վերածնութիւն» վերնագրով երկը, որ մենք յանձնարարում ենք ամէն մի հայ մարդու կարդալ իբրև վերին աստիճանի հիմնաւոր և հայրենասիրական գործ մեր ներկայ դրութեան մասին: Գ. ԵնԴ.

որ վատութիւնը նրանումն է, որ չկալ ազատ խօսք և քննադատութիւն, իսկ ուր չկալ քննադատութիւն, այս-տեղ և չկալ ճշմարտութիւն։ Այսօր մենք կարող ենք խօսել և ամեն մի լաւ հայի սրբազն պարտականութիւնն է բոլորովին անկեղծ կերպով արձագանք տալ, ով ինչ բանով կարող է, այն բոլոր անցքերին, որ կատարւում են մեր դժբաղդ հայրենիքում։

Արաբացոց արշաւանքներից սկսած, ալսինքն եօթերորդ դարուց ի վեր, մեր հայրենիքը մեր ցեղի համար կատարեալ սպանդանոց է եղել Ով գէֆթ թերթել է մեր պատմագիրներից մի քանիսը՝ Եղիշէն, Առաքել պատմագիրը, Արիստակէս Լաստիվերտցին, Կիրակոս Գանձակեցին ևալլն, և ծանօթ է մի երկու տարի առաջ Էջմիածին հրատարակուած «Հալոց նոր վկաները» նշանաւոր հատորների հետ ու մի փոքր կանգ է առել մտածելու Հայաստան ասած երկրում կատարուած պատմական փաստերի վրայ, նա չի կարող չհամոզուել, որ մեր պատմութիւնը մի չտեսնուած, մի բացառիկ, մի ողբերգական պատմութիւնն է։ Այս պատմութեան գլխաւոր յատկանիշներից մէկն այն է, որ հայ ցեղը սկսել է ապրել այնպիսի մի երկրում, ուր շատ շուտով երևան են եկել իրանից ծագումով և կրօնով տարբեր զօրեղ և բազմաթիւ ազգեր, իսկ իրա շրջակալքում ապրող եթէ ոչ ցեղակից, բայց կուլտուրապէս յար և նման ազգերը շատ շուտով ոչնչացել են, որպէս Ասորացիք և Բարեկացիք։ Այսպիսով դեռ հինգերորդ դարում կրօնի տարբերութեան պատճառով Հայաստանը մի օր հասական կռուի բռնուեցաւ կրակապաշտ Պարսկաստանի հետ, իսկ եօթերորդ դարուց սկսած մեր երկիրը արաբները ոտնատակ տուին և այդ օրից սեղուկները և թուրք-թաթարական ցեղերը և պետութիւնները մեզանից ձեռք չեն քաշել։ Պէտք է կարծել, որ մեր պապերը մեզանից ոչ պակաս թէ հայրենասէր են եղել և թէ մեզանից ոչ պակաս՝ քաջ։ Չնայելով մեր գրացի ժամանակակից վրացիների կարծիքին թէ՝ հայերը վախկոտ են և վաճառական, մեր պատմու-

թիւնը և Կովկասեան վերջին հարիւրամեակի տարեգրութիւնը անջնջելի ապացուցներ են տուել, որ հայ ասած ազգը հերոսական քաջութեան գործեր ունի կատարած և քաջութեան մէջ անվեհերութեան բազմաթիւ օրինակներ առած։ Չետեղով սակայն մեր անխախտ համոզման, որ մեր պապերը մեզանից շատ առաւել հալրենասէր են եղել և շատ առաւել քաջ, չենք կարող ի հարկէ ուրանալ մեր ներկալ դրութիւնը, այսինքն թէ՝ մեր պապերի քաջութիւնը և ջանքերը չկարողացան ստեղծել մի անկախ Հայաստան և մենք վերջին հարիւր տարին մի փոքր շունչ քաշեցինք Ռուսաստանում, որի հովանաւորութիւնը ձեռք բերելու համար Ղարաբաղի մելիքները և մեր ներսէս Վ կաթուղիկոսը մեծամեծ ջանքեր գործ դրեցին։ Թող ալսօր ռուս գեներալները և ռուս կօգակները մեզ կոտորեն կամ կոտորել տան, բայց իրողութիւնը մնում է անհերքելի, որ մեզ կոտորող թուրքերի ձեռքով Բագու քաղաքի հայ տներ վառող ռուսները Կովկաս մտան հայերի անձնուէր և անձնուրաց զոհողութիւնների և մեծամեծ օգնութեան շնորհիւ։

Ասելիքս այն է, թէ մեր պապերը չկարողացան ազատաւել օտարի լծեց, այլ գերադասում էին մի ծանր լուծ փոխելու աւելի թեթև լծով։ Ալսպէս է եղել հայի վիճակը և որպիշետե ոչ Հայաստանի աշխարհագրութիւնն է փոխուել, ոչ հայի թիւն է աւելացել և ոչ մեր հարեւաններն են ոչնչացել և ոչ էլ քրիստոնէութիւնը իրական կըն է դառել աշխարհի համար, ուստի և մենք, մեր պապերից ոչ աւելի խելօք սերունդներս՝ մեր հալրենիքի վիճակը տնօրինելու ժամանակ և տնօրինող կուսակցութիւնները մեզ հետ, պարտական են հաշուի առնել և մեր պատմութիւնը և ըստ այնմ շարունակել մի գործ, որ անհատների իրաւունքից և պատասխանատւութիւնից վեր է և որի մասին ամեն հայ թէ իրաւունք ունի և թէ պարտական է բացարձակ կերպով իւր կարծիքն լայտնել, որպիշետե խնդրի այս կամ այն կերպ լուծումից է կա-

խուած ալն հարցը թէ վաղը նորից Երզրումի և Սասունի կոտորած կլինի թէ ոչ, արդեօք Բագու և Նախիջևան քնաջինջ կլինի հալութիւնը թէ ոչ, արդեօք Թիֆլիզում մեր գիմնազիստ որդիների դիակները կտեսնենք, թէ ալս բոլորին վերջ կլինի մի օր:

Ահա ալս հարցերի լուծման կարևորութիւնն է հրապարակ հանել Կ. Պօլսի Մաղաքիա Օրմանեան Արքեպիսկոպոսը. այն Օրմանեանը, որ մի երկու տարի առաջ հալերիս համար ամենաանբարեպատեհ հանգամանքներում Կ. Պօլսում կարողացաւ յաջողեցնել մի շատ նշանաւոր ժողով հալ հոգեստրականներից և գրել մի շատ զօրեղ բողոք Գոլիցինի ըէժիմի դէմ և հալ եկեղեցական կալուածների գրաւման առէթով, որ հասաւ թէ եւրոպական տէրութիւնների դեսպաններին և թէ Ռուսաց Պալուեր ձեռքը: Այս ալն Օրմանեանն է, որ նոյն ալն ժամանակ կարողացաւ Սուլթանի հաճութիւնը ստանալ, որ ամենայն Հալոց Կաթողիկոսութիւնը փոխադրուի Թուրքիա, եթէ Ռուսաստանը շարունակէ մեր հաւատի և մեր զովբդի դէմ իւր ճնշումները:

Ամեն մի հասարակական գործ, որ քննտդատութիւնից զուրկ է, չի կարող արդիւնաւոր լինել և ուր չկայ քննադատութիւն, այնտեղ չկալ և ճշմարատութիւն: Ահա Օրմանեան սրբազնը խնդրում է, որ Թուրքիայում հալ յեղափոխական կուսակցութիւնները դադարեցնեն իրենց գործունէութիւնը, որովհետև հակառակ դէպքում կոտորածը կարող է վերջնական և մահաբեր լինել հալութեան համար: Այս ասել է, թէ սրբազն Օրմանեանը հալ յեղափոխական կուսակցութիւնների գործունէութիւնը առաջարկում է նախ Ամենայն Հալոց Կաթողիկոսի և ապա ուրեմն հալ ազգի քննադատութեան: Այս, ալս շատ վաղուց էր հարկաւոր, դառնութեան բաժակը լցուած է: Բայց աւաղ, շատերն են, որ բողոքում են, բայց քը շերը մեզանից մտածում են ալս մասին: Դադարեցնել պատամբական գործունէութիւնը Թուրքիայում. բայց ի՞նչ

կնշանակի այս — ահա այն բնական հարցը, որ լեղափոխական մարմինները բնականաբար պիտի առաջարկեն սրբազն Օրմանեանին և նրանց, ով խորհուրդ կտալ դադարեցնել: Արդեօք այս չեն նշանակի թէ՝ թող թուրք պաշտօնեաները կեղեքեն հալին, թող քիւրդը կողոպտէ ու կոտորէ հալին, իսկ հալը թող աղօթք անէ մեծ մարդասպան Սուլթանի արևշատութեան համար: Եթէ սրբազն Օրմանեանի խնդիրն այս է՝ այն ժամանակ մի տարօրինակ զուգագիպութիւն է, որ Կովկասում էլ ուսւ ոստիկանութիւնը և ուսւ հալրենասէրները ասում են թէ թուրքերը հալերին կոտորում են, որովհետև հալերը կօմիտէներ ունին և ուսմբ են գցում, ուստի և հալերը մեղաւոր են:

Սուլթանի բարեկամութիւնը վայելող սրբազն Օրմանեանի պահանջը և ուսւ կառավարութեան ներկայացուցիչներից շատերի պահանջը զարմանալի կերպով նման են իրար: Ինչ հրապուրելի դաշնակցութիւն, Սուլթանի ուժիցի և Ռուսաստանի մեռնող ուժիմի ներկայացուցիչների ծրագիրների զարմանալի զուգագիպութիւն հայկական խնդրի վերաբերմամբ: Ուսւաց Եկատերինա երկրորդ խելօք կայսրուհին մի ժամանակ մեր Յովսէփ Արզութեան եպիսկոպոսի շնորհիւ Ուսւաստանի շահերի համար հարկաւոր էր համարում Հայոց թագաւորութիւն՝ ստեղծել, իսկ այսօր կոմս Վօրօնցով Դաշկովի փոխարքայութեան օրօք Բագուի թուրք Աշուրովը ուսւ ազգասէրների հետ միասին ազգասիրական թափօրի է դուրս գալիս և օր ցերեկով ուսւ ոստիկանապետի, ուսւ կօզակների և օֆիցիների ներկայութեամբ վառում է տասնեվեց հայի տներ և սպանում ու կողոպտում բազմաթիւ հալեր: Tempora mutantur et Homines in illis.

Բայց այս առածը, որ անհատներին է վերաբերում թէ ժամանակի հետ մարդիկ էլ փոխում են, ի հարկէ նոյն չափով և ուղիղ է և այն տէրութիւնների համար, որոց ղեկը անհատների և ոչ հաստատութիւնների ձեռքումն է, ալսինքն արագ փոփոխութեան են ենթարկում

ալն տէրութիւնների քաղաքականութիւնը, որոնք հասատ օրէնքներով և հաստատութիւններով չեն ապրում, ալլ բռնակալների կամքով և նրանց գործակալների քմահաճութեամբ։ Բայց դառնում ենք բուն խնդրին։

Ժամանակը հասել է, այսինքն ժամանակն է, որ մեր հասարակական գործերը և գործիշները, մեր կուսակցութիւնները, մեր լեզափոխականները, մեր ինտէլիգէնցիան, մեր հոգևորականները և մեր բոլոր ոլժերը հրապարակական քննադատութեան ենթարկուեն։ Այս հարցը դրել է սրբազան Օրմաննեանը, թող չը վիրաւորուի նա, եթէ ես նրան Սուլթան Աբդիւլ Համիդի կամքի գործակատար դարձրի։ Այս նոյնքան ճիշտ է, որքան և նրա կողմից ազգասիրական է *), Եթէ Ամեն. Օրմաննեանը չի կամենում, որ Հայութատանում կոտորած լինի և այս պատճառով է դիմում Վեհափառ Կաթողիկոսին, նոյնքան ճիշտ է, որ այս գիմումը հաճելի է և Կարմիր Սուլթանին։ Քանի որ Հայի գրութիւնը ողբերգական է, իսկ ողբերգութեան մէջ պատահականը շատ մեծ նշտակութիւն ունի, ուստի և շատ կալելի է, որ այսօր Սուլթան Համիդի կարծիքը աւելի արժէք ունենալ հայ ազգի ապրելու տեսակէտից, քան արևելեան քրիստոնեաների պաշտպանի դերով մի ժամանակ հապարտացող ռուս կառավարութեանը, որ այսօր իւր օր հասական տագնապի ժամանակ լոկ անսիրա հանդիսատես է դառել Հայ արիւնլուիկ ժողովրդի հրապարակական նահատակութեան։

Ինչ և իցէ, սրբազան Օրմաննեանը մի կարևոր իւրնդիր է յարուցել, որ Վեհափառ կաթողիկոսի նախաձեռնութեամբ ալսօր հայ ժողովրդի հրապարակական քննութեան և դատին պիտի յանձնուի։

Ժամանակն է, որ հայերը անկեղծ խօսեն և ինքնուրուն կերպով մտածեն և ոչ նմանողութեամբ և վախկո-

*) Ով ծանօթ է Օրմաննեան սրբազանի կեանքի բազմամեայ գործունէութեան՝ նորա համար պարզ է, որ նա միշտ գործել է բարձր հայրենասիրութեամբ, ինչպէս խոստովանում է և պ. Ենդիրարեանը։ ԽՄԲ.

տութեամբ; Բոպէն օրհասական է և ամեն մի նոր սխալ վերջնական վտանգի կարող է ենթարկել հայութիւնը, որ կորստեան ճանապարհի վրայ է ալսօր:

Հայութեան հետ կոռուող ուժերը ահոելի են և նըրանց գէմ ձեռնարկուեիք միջոցները պիտի լաւ մտածած և կշռադատուած լինին: Հեւոնւ մեզանից վտխկոսութիւնը և կեղծ ամօթը, թող ամեն հայ անկեղծօրէն և բացարձակ ասէ այն, ինչ որ մտածում է հայութեան օգատին առանց վախենալու, որ այս կամ այն կուսակցութիւնները մեզանից դժգոհ կլինեն: Սրբազան Օրմանեանը խընդիր է լարուցել, թէ հայերին վերջնական կոտորումից ազատելու համար Թիւրքիալում պէտք է լեղափոխական գործունէութիւնը դադարեցնել: Ահա այս լուրջ խնդիրը հայ ժողովուրդը պիտի լուծէ և նա թող լուծէ առանց ճնշման:

Փորձենք մենք էլ իբրև հայ մարդ մօտենալու ալտինդրին: Բայց նախ պէտք է որոշել ինչ է լեղափոխական կուսակցութիւնների նպատակը և որոնք են այն միջոցները, որոնցով այդ կուսակցութիւնները իրագործում են իրենց նպատակները: Եթէ մի կողմ թողնենք «Հնչակեան» կուսակցութեան վերջին ծրագիրները և Սոցիալ-Դեմոկրատ հայ կուսակցութեան ձգտումները, որոնց հետ մենք ծանօթ ենք «Հնչակ» և «Սոցիալիստ» թերթերից, որոնք զուտ ազգային խնդիրներով չեն հետաքրքրում, այլևս հրապարակի վերալ կմնալ միմիալն «Իաշնակացութիւնը», որ առաջ զուտ ազգային ուղղութիւն ունէր, իսկ «Վերջերում» իւր ծրագրի մէջ մտցրել է և բանուորական խնդիրներ և սոցիալ գէմոկրատական ծրագրից էլ է ընդունել: Այսօրուակ մեր վիճակը մեզ հնարաւորութիւն չի տալիս մտածելու այն հարցի մասին թէ որն է լաւ ոռւս ժողովրդի համար, որ նրա պարլամենտը լինի գէմոկրատական հասարակապետութիւն թէ ազտամիտ կամ թէ գէմոկրատական ստհմանադրութիւն, կամ ոռւս գիւղացուն պէտք է տալ կալուածատէրերին:

պետական հողերը ձրի թէ լայտնի վարձով ևալին ևալլն։ Այսօր դեռ մենք մի խնդրի մասին պիտի մտածենք, թէ արդեօք մենք կամենում ենք ապրել իբրև հայ ազգ թէ հայութեան բնաջինջ լինելը մեզ համար միւնոյն է։ Եթէ մենք ազգալին գորութեան մասին պիտի մտածենք, այն ժամանակ մեր ուժերը ալնքան նուազ են, որ հազիւ թէ կարողանանք միմիալին այս մասին հոգալ։

Հայ ազգի գլխաւոր դժբաղզութեան պատճառներից մէկն էլ նրանումն է, որ ոչ միայն մեզ շրջապատող և մեզ տիրապետող ազգերը, այլ նոյն իսկ մենք ինքներս մեզ լաւ չենք ճանաչում և զուրկ ենք մեր պատմութիւնը հասկանալու և գնահատելու ընդունակութիւնից։ Հայաստանը իւր քաղաքական անկախութիւնը կողցրել է շատ վաղուց, բայց հայը շարունակել է ապրել իբրև ազգ։ Այս գլխաւոր պատմական փաստը մենք լաւ չենք քննել և հաշուի չենք առել, երբոր ծագել են մեր մէջ յեղափոխական կուսակցութիւնները։

Տասնեիներորդ դարու սկզբներին, դեռ հայութեան վերածնութեան աղօտ լոյսերի օրերում, ինչպէս վերը լիշեցինք, կալին մարդիկ, որ Հայաստանի անկախութեան մասին էին երազում և Ռուսաց Եկատերինէ Ռ կալսրու հին քիչ էր մնացել, որ Հայոց թագաւորութիւն ստեղծէր։ Անկախութիւնից զրկուած հայերը սակայն միշտ մեծ տենչանք են ունեցել ազատուելու գերութիւնից, բայց չեն կարողացել։ Այսպէս՝ այսօր մեր առաջ դրսւած է նոյն դժուար լուծանելի խնդիրը։ Ի՞նչ է կամենում հայ ժողովուրդը, որ դարերի ընթացքում մարտիրոսաբար կուլում է շրջապատող խաւարի և բռնութեան դէմ, դաշերի բնթացքում լուսահատական կատաղութեամբ պաշտպանում է Քրիստոսի խաչը և իւր պապերի լեզուն և չնալելով դժբաղդ հայրենիքում ապրելու անհնարաւորութեան, միշտ ձգտում է վերադաւնալ հայրենիք, միշտ պաթան» է երգում։ Կամենում է արդեօք հայ ժողովուրդը քաղաքական անկախութիւն, կարող է ցանկանալ, ինչ

ուժեր կան և ի՞նչ պարմաններ, որ կը նպաստեն կամ կիսանգարեն նրա ալսպիսի ձգտումներին, իսկ եթէ չի կարող ցանկանալ քաղաքական անկախութիւն, ապա ուրեմն ի՞նչ կարող է ցանկանալ հայն ալսօր:

Հայ լեղափոխական կուսակցութիւնները թէև իրենց ծրագիրների մէջ բացարձակ կերպով քաղաքական անկախութեան խնդիր չեն դրեւ, բայց զուտ հայկական գաւառների համար ինքնավարութիւն պահանջելով՝ նրանք առիթ են տուել թէ օտարներին և թէ հայ ժողովրդին կարծելու, որ այդ կուսակցութիւնները հայկական անկախութեան մասին են մտածում: Նրանց գործ դրած միջոցները, ալսինքն զինեալ ապստամբութեան ձգտումը, որ արտալայտուել է Թիւրքիայում արշաւանքներով, նոյնպէս ապացուց են, որ այդ կազմակերպութիւնները Հայաստանը Թուրքիայից անջատելու են ձգաել: Կարելի է ի հարկէ այդ արշաւանքները փաստաբանել և պաշտպանել իբրև միջոց հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան, բայց որովհետև ոչ ամեն անգամ Որուսաստանից գնացած արշաւանքները եղել են իբրև վրիժառութիւն լայտնի չարագործութիւնների կամ պատասխան այս կամ ալնտեղ պատահած անցքերի, ուստի և այդ շատ անգամ անտեղի արշաւանքները միշտ բացատրուել են իբրև ապատամբութիւն առաջ բերելու փորձեր:

Մեր պատմութիւնը սակայն անդրդուելի փաստերով ապացուցանում է, որ Հայաստանի քաղաքական անկախութեան գաղափարը մի ցնորդ է, որ հայը սիրում է փալիքալե՛ բայց Հայաստանի ազատութեան գաղափարին հայը սակայն նոյնպէս խորին կերպով հաւատում է, որ պէս հրէան մեսիալի գալստեան: Հրէան հաւատում է, որ մեսիան դեռ պիտի գալ և հայը հաւատում է, որ նա անկախ Հայաստան պիտի աեսնի և դժուար է ասել թէ հրէան մեսիան է նրան թանգ նստել թէ Հայաստանի ապագալ անկախութեան տեսչանքը՝ հային: Մեզ թւում է թէ ոչ հրէալի մեսիան է աշխարհ գալու և

ոչ Հայաստանի քաղաքական անկախութիւնն ենք մենք տեսնելու։ Բայց արդեօք այս դրութիւնը ընդունելով՝ մենք պիտի ուրանա՞նք հայութիւնը և համաձայնենք, որ մեզ կոտորեն Նախիջևանի Խաները, Բագուալ մութ խուժանը և միջինատէր թուրքերը կամ Տաճկաց կտորավարութիւնը։ Միթէ այս կնշանակի, որ մենք չպիտի ինքնապաշտպանութեան գիմենք իբրև մարդ և ապա իբրև մի ցեղ, որ հազարաւոր տարիներ ամենադժոխալին պայմաններում իւր արժանաւորագոյն և գերբնական ուժով օժտուած անհատների շնորհիւ պահել է իւր ազգային ինքնուրոյնութիւն։ Բնաւ ոչ։

Արդ՝ հասկանալի է, որ մենք այսօր դրական կերպով պիտի յալտարարենք աշխարհին, որ քաղաքական անկախութեան մասին չենք երազում ալժմ, այլ կամենում ենք ունենալ Հայաստան, ուր հայը իբրև մարդ և իբրև հայ ապրէ և կարողանալ անարգել զարգացնել իւր անհատական և ազգային ուժերը, կարողանալ ապրել մարդու պէս և իբրև հայ՝ հալածանքի չենթարկուի, այլ՝ ընդհակառակը, ազատ տնօրինէ իւր ներքին կեանքի կարգերը։

Հայութիւնը պահելու իդէալը այնքան մեծ է հայ ազգի մէջ, որ ոչ ահուելի պետութիւնների նենգաւոր դաւերը, ոչ հայերի մէջ եղած պակասաւոր տարրերի գոյութիւնը, ոչ հայրենիքի աշխարհագրական անյաջողակ գերքը չեն կարողացել մինչեւ այսօր հային գրկել հայութիւնը պահպանելու յոյսից։ Զարմանայի և ողբերգական զուգագիպութիւն և նմանութիւն մեր այսօրուալ դրութեան և հազարաւոր տարիներ առաջ ապրած հայի հետ։ Եղիշէի ոսկեղինիկ նկարագրութեան ուրեր կարծես այսօր են կատարուել, այսօր կարծես մեր կեանքը մի մազի շափ չէ փոխուել ալդ օրուանից ի վեր։ Սուրբ Վարդանանց օրերին էլ հայութիւնը վտանգուած էր պարսիկներից և քաղաքական խելքից միշտ զուրկ հայը իւր լուսը գնում էր քրիստոնեալ Բիւզանդիօնի վերայ. ահա ալդ գիմումը.—

«Յովսէփ Եպիսկոպոսապետ բազում Եպիսկոպոսակցօք իմովք և ամենայն զօրք Հայոց, Վաստկ մարզպան և Ներշապուհ Ռըմբոսեան Հանդերձ սպարապետաւս և ամենամեծ նախարարօքս առ մեծանունդ Թէոդոս կայսր, բազմացի ողջուն մեր առ քեզ և ամենայն զօրաց քոց, որ խաղաղասէր մարդասիրութեամբ ձերով տիրէք ծովու և ցամաքի, և չեք ոք յերկրաւորացս՝ որ ձերում անարգել տէրութեանդ ընդդէմ դառնալցէ: Որպէս մեք իսկ ունիմք զանսուտ լիշտակարանոն զառաքինի նախնեացն ձերոց, ունելով զեւրոպէ անցին և տիրեցին և ասիացւոց կողմանցն ի սահմանոյն Սերաց յինչև ի կողմանս Գագերովնի, և ոչ ոք գտաւ ստամբակեալ և ելանել ըստ ձեռն նոցա: Եւ յանչափ մեծ իշխանութեան դաստակերտ մեծ և սիրելի զՀայոց աշխարհս անու անէին: Վասն որոյ և նախնին մեր Տրդատիսս լիշելով զառաջին սէրն ձեր, որ ի տղալութեան Փախուցեալ ի հայրասպան մարդախողխող հօրեղբարցն իւրոց՝ տպրեալ սնաւ. յերկրիդ Յունաց, և ի ձէնջ թագաւոռ բեալ տիրէր հայրենի աշխարհիս, սոլնպէս և գհաւատսն որ ի Քրիստոս՝ ընկալեալ ի սուրբ Եպիսկոպոսապետէն Հոռովալ, յուսաւորեաց ըզխաւարալին կողման հիւսիսոյ զոր և ալժմ կամին ի ձէնջ կորգել հանել. խաւարասէր որդիքն արևելից և ալլնա: Յեաոլ Եղիշէն պատմում է թէ ինչպէս հայ ազգի պատգամաւորները «ընթերցան գիր պաղատանաց Հայոց աշխարհին և զիշտակարանսն նախնեացն»: Այս ժամանակ մեռնում է Թէոդոս կայսրը և յաջորդում է նրան Մարկիանոսը, որ ոչ միայն օգնութիւն չէ խուանում դաւանակից հայերին, ալլ և դաւաճանեց նրանց և օգնութիւն խոստացաւ պարսից:

Նեղդ հայերը կարծում էին թէ Թէոդոս կայսրը շատ բարեպաշտ էր և շատ մեծ օգնութիւն պիտի տար նրանց, իսկ Մարկիանոսը իւր ասորի խորհրդատուի և սպարապետի ազդեցութեան տակ մատնեց նրանց սուրբ գործը Քրիստոնէութեան թշնամիներին և իրը թէ ալս պատճառով էր որ «ի նոցա բանս եղեալ թագաւորն, ոչ կամէր ան-

«աալ միաբան ուխտին Հալոց, որ ամենայն ուժովն իւ-
«րեանց ընդգէմ կացեալ էին չարութեան հեթանոսաց:
«Իսկ անարիս ալս լաւ համարէր պահել զուխտն հեթա-
«նոսաց վասն մարմնական խաղաղութեան, քան պատե-
«րազմակից լինել ուխտին քրիստոնէութեան: Վասն ալ-
«սորիկ փութացաւ արձակեաց գեսպանս առ թագաւորն
«Պարսից զնոյն Եփլալիոսն, և եմուտ ընդ նմա լուխտ
«Հաստատութեան՝ ձեռնթափ լինել ի զօրացն Հալոց զօ-
«րու և զինու և ամենալն օգնականութեամբ»:

Ճիշտ ալսօր է կարծես կատարուել ալս բոչորը: Երբոր
Հայ ազգը և Հայ լեզափոխական կուսակցութիւնները Թուր-
քիալում գործելիս երկար ժամանակ գեռ հաւատում էին
թէ Թուսաստանը իբրև արևելեան քրիստոնեանների
պաշտպան ձևացող պետութիւն պիտի նպաստէ Հայկական
Խնդրի բարելաջող լուծմանը՝ նոյն ժամանակ հէնց իշխան
Լոբանով. Ռոստովկին կատարել տուեց 1895 թուականի
Սասունի կոտորածը, իսկ մի քանի տարի լետոյ իշխան
Գոլիցինը սերմանեց Կովկասեան հարութեան բնաշինջ ա-
նելու ծրագիրը, իսկ մենք՝ քաղաքականապէս միշտ տգէտ
և տհաս ողորմելիներս, աշխատում էինք պատմական փաս-
տերով ապացուցանել թէ մենք Թուսաստանին միշտ
հաւատարիմ ենք եղել, ուստի և միշտ կարծել ենք թէ
քրիստոնեալ Թուսաստանը մեր անկեղծ հաւատարմութեան
համար մեր բնական պաշտպանը պիտի լինի:

Սասունի և Երզրումի կոտորածների ժամանակ էլ
Հալոց կաթողիկոսը շարունակում էր «գիր պաղատանաց»
գրելու Պետերբուրգի արքունիքին, որպէս մեր պապերը
գրում էին Բիւզանդիոն: Բայց աւազ, որ հէնց նոյն Թէո-
դոսը, որի վրայ մեծ յուս ունէին Հայ ազգի պատգամա-
ւորները և որը իբր թէ «հոգ տանէր մեծաւ յօժարու-
թեամբ, զի մի եկեղեցիքն արևելից յափշտակեսցին յա-
նորէն հեթանոսացն, բայց վախճան կատարածի կենաց
նորա հասանէր և կարի չար խափան լինէր գործոյն օգ-
նականութեան» հէնց վաղուց դաւաճանել էր Հայերին:

ԽԵՂԾ — և քաղաքական խելքից միշտ զուրկ հալեր ։ Նոյն իսկ Եղիշէն կարծում է թէ Թէոդոս կալեր մահն էր, որ խանդարեց Բիւզանդիոնին օգնելու հալերին, բայց լայտնի է պատմութիւնից, որ նոյն ալդ Թէոդոսը դաշն ունէր Յազկերտի հետ կապած Հալաստանի վ'րաբերութեամբ, որով Բիւզանդիոնը ոչ միայն չպիտի օգնէր հալերին, այլ և պիտի օգնէր պարսիկներին հալերի ապստամբութիւնը նուաճելու և Մարկիանոսը ոչ թէ իբրև անարի և վատ մարդ հրաժարուեց հալերին օգնելուց, որպէս կարծում է Եղիշէն, այլ կատարեց միմիալն իւր նախորդի դաշնադրութիւնը, որովհետև այսպէս էին պահանջում Բիւզանդիոնի քաղաքական շահերը։

Բոլորովին ճիշտ է նկատում Եղիշէի մեկնիչը Միքայէլ փաշա Փորթուգալը, թէ բոլորովին ձեռնտու չէր Բիւզանդիոնին խրախուսելու հալերի ապստամբութիւնը պարսից դէմ, որովհետև Հալաստանի մի մասն էլ իւր իշխանութեան տակ էր։

Ճիշտ այսօր է կարծես կատարուել ալս բոլորը։ Զէ՞ որ Սուլթան Համիդն էլ կարողացաւ վերջին տարիները ներշնչել ոռւսաց բիւրոկրատիալին, որ հալերի ապստամբական շարժումները Թիւրքիու դէմ պէտք է զսպել, որովհետև հայը նոյնպէս լեղափոխական տարը է և Ռուսաստանում և յէ՞ որ մեր զինեալ խմբերը, որ Թումանի և ուրիշների զլխաւորութեամբ անցնում էին Թուրքիա հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան գործին ծառայելու՝ ոռւս և թուրք սահմանապահ զօրքերի միահամուռ և համերաշխ լարձակման զոհ էին գնում ու կոտարւում թէ ոռւսից և թէ թուրքից և ոռւս Գնուտով ու Բըկով օֆիցէրները մի կողմից էին գնդակահարում մեր հերոսներին, իսկ թուրքերն ու քըդերը՝ միւս կողմից։

Ահա քրիստոնեալ Ռուսաստանի և մահմեդական Թուրքիաի մի հրապուրիչ դաշնադրութիւն հերոսական լամառութեամբ իւր հալրենիքում ապրել միալն կամեցող մի բուռն քրիստոնեալ ժողովուրդը բնաշխնջ անելու համար, -

որպէս և առաջ էր քըխտոնեալ Բիւզանդիոնի և կրակա-պաշտ պարսից հետ նոյն նպատակով։ Այս մեր պատմական ճակատագիրն է։

Արդ, ինչ պէտք է անել և որպիսի ազգային քաղաքականութեան պիտի հետևենք մենք, որպիսի ազգային իդէալներ պիտի ունենանք և ո՞րոնք են այն միջոցները, որ մեզ կարող են հասցնել մեր իդէալներին։

Մենք վերև նկատեցինք. որ մեր հալրենիքի աշխարհագրական գիրքը մեզ առ այժմ զրկում է անկախ հալկական պետութիւն կամ նոյն իսկ ինքնավարութիւն ստեղծելու կարելիութիւնից, որովհետև չկայ գէթ երկու կից նահանգ, ուր հալութիւնը ազգաբնակութեան գէթ 60% կազմէր։ Չնայելով սրան, հայը իբրև հայ ապրել է հերոսական եռանդով և կամենում է ապրել։ Սա հայի առաջին առանձ նայատկութիւնն է, նա նացիոնալիստ է բառիս բուն նշանակութեամբ, նրան պատմութիւնն է հալացրել։ Հայի երկրորդ լատկութիւնը, որ նրան պահել է, նրա բնաւորութեան ճկունութիւնն է, որ շատ կարեոր լատկութիւն է թէ ապրելու և թէ քաղաքակրթութեան բարիքները իւրացնելու համար։ Հայը պրօգրէսիստ է և այս պատճառով նա ըստ մեր աւանդութեան առաջին քրիստոնեալ ազգը դարձաւ, երբոր եւրապացիք գեռ կոտապաշտ էին, իսկ մեզ այսօր կոտորել տուող ոուս կօզակի և խուլիդանի պապէրը ըստ իրենց պատմագիր նեստորի շիւախ ակն ՅԵՒՐԻ և ՅԵՒՐԻՆՈ ՄԱԿՕ Ֆեախ, ալսինքն ապրում էին գաղանի պէս և գաղանի միս էին ուտում, այս է պատճառը, որ ոուս ազատարար շարժման արշալուսի ցօղերի մէջ կային և Հայաստանի արեւի ցօղերը։—Մեր նալբանդեանը շատ սակաւաթիւ ոուս ազատամիտների, իսկէնդէրի և ուրիշների բարեկամն էր։ Ցիսուն տարուայ խաղաղ կեանք բաւական էր, որ Կովկասի հայ ժողովուրդը լաւաշադիմութեան շաւզի վրայ ահագին քայլեր անէր։ Նա ստեղծեց հարիւրաւոր դպրոցներ տասնեակ հազարաւոր աշակերտներով, մի նորագոյն գրականութիւն մարդ-

կալին հոգու ստեղծագործութեան բոլոր տեսակներով, Կով-
կասեան արդիւնաբերութիւն և վաճառականութիւն: Այս
բոլոր փաստերն ապացոյց են, որ դարերի ընթացքում
հայի հանճարը զարգացել էր խաղաղ և շինարար կեանքի
համար և նա պիտի ձգտէ հասարակական կեանքի այնպի-
սի պայմաններ ստեղծելու, որ կարողանալ ապրել և նը-
պաստել երկրի խաղաղ զարգացման և լառաջադիմութեան
գործին:

Բայց որովհետեւ Հայաստանի աշխարհագրական գիրքը,
նրա խառն ընակչութեան կազմը, հայ տարրի սակաւու-
թիւնը և Եւրոպական տէրութեանց փոխադարձ շահերի
դասաւորութիւնը երեք շատ զօրեղ Փակտօրներ են, ո-
րոնք հնարաւորութիւն չեն տալիս մեզ աղատ Հայաստան
կամ նոյն իսկ Հայաստանի ինքնավարութիւն ձեռք բերելու,
ուստի մեզ մնում է ամեն մի երկրում միանալ տեղական
խաղաղ տարրերի հետ և ձգտել երկրի լառաջադիմական
զարգացման, պահելով մեր ազգալին ցեղական առանձնա-
լատկութիւնները ու ժողովրդական ազգալին եկեղեցին:
Առանձին շահ չունենք մենք ոչ ծայրահեղ ուամկավարա-
կան կուսակցութիւնների ձեռքին խաղալիք և գործիք
դառնալու և ոչ էլ բռնապետութեան նեցուկ, որպէս
թուրքերն են անում: Մենք քաղաքներ շինող և հող մշա-
կող ազգ ենք և մենք կուսակց պիտի լինենք միմիայն
խաղաղ զարգացման և աշխատանքի համար պայմաններ
ստեղծող սարք ու կարգի: Զուտ քաղաքական նպատակնե-
րը այսօր արգէն մեզ համար անմատչելի են դարձել և
մենք ամենաշատը երազել կարող ենք տիրանալու նոյն իսկ
Լիբանանի պէս ինքնավարութեան, միայն որևէ Եւրոպական
մի զօրեղ պետութեան աջակցութեամբ: Մեր այսօրուայ ամե-
նամեծ քաղաքական իդէալը կարող է լինել այն, որ հա-
յերով ընակեցրած երկիրները Եւրոպական մի որևէ է տէ-
րութեան ձեռք անցնեն, եթէ յուսներս բոլորովին կըտ-
րուին, որ մեզ տիրող ազգերը իրենք անընդունակ են
մացնելու մեր երկիրը կարեոր վարչական և անտեսական

բարենորոգումները։ Այսպէս է եղել մեր պատմութեան ընթացքը, որ մենք օգնել ենք Պարթևներին կամ Հռոմալեցոց, Բիւզանդիօնին կամ Պարսից և վերջն էլ Ռուսաստանին բայց ոչ Թիւրքիալին։

Այս բոլոր մեր ասածները բղխում են մեր պատմութեան ընթացքից և ոգուց, մենք միշտ ձգտել ենք յառաջադիմութեան և պահել ենք մեր ազգալին ինքնուրույնութիւնը—մեր լեզուն, մեր ազգալին ժողովրդական եկեղեցին և չնայելով մեր ողբերգական պատմութեան, մենք մեր հալրենիքը սիրել ենք և ունենք հալրենիք։ Եթէ մեզ վիճակուած չէ, որ մենք տիրենք մեր հալրենիքին՝ այն ժամանակ մենք մեր բոլոր գոյութեամբ պիտի ձգտենք կամ մեզ տիրող ազգերի գործերում նպաստելու այնպիսի կարգերի հաստատման, որոնք հնարաւորութիւն կտան մեզ ապրելու իրեւ ազգ, կամ պիտի նպաստենք, որ մեր երկրի ճնշուած մտսերը մտնեն և տիրապետեն այնպիսի ազգեր, որոնք մեր ազգալին գոյութեանը և զարգացմանը խանգարելու բէժիմ չունեն։ Այս տեսակ եւրոպական տէրութիւններ կան և այս մասին պիտի լուրջ մտածել։ Ահա թէ ինչը պիտի լինի մեր բոլոր կուսակցութիւնների, մեր բոլոր ժողովրդի քաղաքական իդէալները, եթէ մենք մի փոքր քաղաքական խելք ունենալ ցանկանանք։

Մենք մեր սեփհական ուժերով մեր ազգալին գոյութեան ապագան ստեղծելու, որպէս երեսում էլէ մեր պատմութիւնից, անկարող ենք, որքան էլ հերոսական լինեն մեր ջանքերը, բայց մենք շատ հզօր ենք, երբոր մեր հոգեկան կորովը և եռանդը միացնում ենք մի որևէ պետութեան, մի որևէ է զօրեղ կուսակցութեան ուժերին։ Մենք առանց բարեկամի, առանց դաշնակցութեան անզօր ենք և բոլոր խնդիրը նրանումն է թէ որտեղ պիտի մենք փնտուենք մեզ համար դաշնակիցներ։ Մեր պապերն այս խնդրում մեծ սխալներ են արել և մենք պիտի զգոյշ լինենք ալդ սխալներն անելուց։ Մենք պիտի միանանք այնպիսի դաշնակցի, որ ազգալին սկզբունք է ճանաշում,

որ մեզանից խլելու չէ մեր ազգային կեանքի նեցուկները—մեր լեզուն, մեր եկեղեցին և մեր հալբենի հողք։ Մենք միացանք հարիւր տարի առաջ ոռւսաց միապետութեան, բայց նա մեզ դաւաճանեց, որպէս Բիւզանդիոնը, նա վերջին քառորդ դարում ճնշեց մեր լեզուն, ձեռնամուխ եղաւ մեր եկեղեցու խորտակման և մեր դարեսոր հալբենիքը—Արարատեան դաշտը սկսեց բաժանել ոռւս գաղղթականներին։ Ալֆմ մենք պիտի մտածենք մեր անելիքը։ Եթէ մենք չենք հաւատում, որ Թուրքիայում և Ռուսաստանում կհաստատուեն նոր կարգեր, ուր մենք կարող կրինենք ապրել իբրև ազգ, մենք պիտի մեր ուժերը չվատնենք ցնորամիտ ակնկալութեանց ետևից ընկնելու վրայ, այլ սոսկ ինքնապաշտպանութեան խնդրով զբաղուենք և հետևենք լուրջ կերպով Եւրոպական տէրութիւնների դաստորութեան ընթացքին, որպէս զի իւրժամանակին կարողանանք որոշ և լաւ մտածած քաղաքականութեան հետեւել։ Այս պատճառով մենք խանգարելու ոչ մի շահ չունենք Ռուսաստանում կատարուող հոսանքին բայց և աւելի քիչ շահ ունենք վատնելու մեր ուժերը Ռուսաստանի լեղափոխութեան աւանդարդում տեղը բռնելուց։ Մեր ուժերը շատ նուազ են և մեր անձնական կեանքն ու գոլքն պաշտպանելու համար էլ ոչ բաւականին նշանաւոր։

Ահա թէ որը պիտի լինի մեր վերջնական ազգային քաղաքականութեան տակտիկան և քաղաքական իդեալները, որպէս և Թուրքիայի վերաբերութեամբ։ այլ ևս երբէք նախալարձակ չլինել

Գ. ԵՆԴԻԲԱՐԵԱՆ